ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

N...35/5...

ք. ...Երևան... «..01...» ...հոկտեմբեր... 2012 թ

.....«ՎԵԿՏՈՐ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ....., հետագայում՝ «Կատարող» , ի դեմս
(կատարող կազմակերպության անվանումը)

.....տնօրեն Աստվածատուրյան Լևոն Հայրապետի....., որը գործում է ըստ
(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

.....կանոնադրության....., մի կողմից, և
(կանոնադրություն և այլն)

...Հայաստանի Հանրապետության Կառավարության..., հետագայում՝ «Պատվիրատու»,
(պատվիրատու տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը)

ի դեմս ...Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի..., որը գործում է ըստ
(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

....., մյուս կողմից,
(կանոնադրություն կամ այլ հիմնադիր փաստաթուղթ)

կնքել են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն պայմանագրի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի համար կատարել սույն պայմանագրով նախատեսված՝ ՀՀ համայնքներում և միջհամայնքային կառույցներում գույքահարկի և հողի հարկի հաշվառման տեղեկատվական համակարգերի տեխնիկական սպասարկման ածխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին սույն պայմանագրով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում վճարել այդ աշխատանքների դիմաց:

ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2.1. Կատարողի կողմից առաջարկվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտեի (ՊԵԿ) կողմից համայնքներին տրամադրված համակարգչային ծրագրով՝ «ՕՐԱԿԼ» („ORACLE'') համակարգով կազմավորված գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման հետևյալ աշխատանքները.

ա) գույքահարկի և հողի հարկի գործող տեղեկատվական ավտոմատացված համակարգի ծրագրային ապահովման սպասարկում, այդ թվում՝

- համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում,
- համակարգերում անսարքությունների հայտնաբերում, տեղափակում և վերացում,
- համակարգերում ծրագրային վթարների, օգտագործողների կողմից անզգույշ գործողությունների, համակարգչային վարակների (վիրուսների) հետևանքների վերացում, տվյալների և համակարգչային ծրագրի աշխատունակության վերականգնում,
- համակարգերն ըստ նպատակի օգտագործման վերաբերյալ տեխնիկական աջակցություն՝ գործող ծրագրային ապահովման օգտագործման ժամանակ ծագած տեխնիկական կոնկրետ հարցերին կոնկրետ պատասխանների ձևով (որը չպետք է վերածվի համակարգչային մեթոդական սեմինարների),
- գործող համակարգերի կատարելագործում՝ գույքահարկի և հողի հարկի հարաբերությունները կարգավորող օրենսդրության փոփոխությունների դեպքում համակարգչային ծրագրային ապահովման համապատասխան բաղադրիչների թարմացում, տեղեկանքների, ծանուցագրերի և հաշվետվական ձևերի թարմացում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքներին ու մեթոդական ցուցումներին համապատասխան,
- գործող համակարգերում Պատվիրատուի առաջարկությամբ տեղեկատվական և վիճակագրական ելքային լրացուցիչ ձևատեսքերի ներդրում՝ համաձայնեցնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ:

բ) գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի աշխատանքն ապահովող համակարգիչների և համակարգչային սարքավորանքի տեխնիկական սպասարկում և նորոգում ըստ անհրաժեշտության,

գ) գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերն օգտագործող անձնակազմին գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի տեխնիկական պահանջներին ծանոթացում, համակարգերն օգտագործողի ձեռնարկի տրամադրում՝

- Պատվիրատուի մոտ առկա աշխատողների համար պարբերաբար,
- աշխատանքի նոր ընդունվողների համար՝ աշխատանքի անցնելուց անմիջապես առաջ:

ԲԱԺԻՆ 3. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Կատարողը գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգի հաշվետվական ձևերի, տեղեկանքների, ծանուցագրերի կազմումը, ինչպես նաև գույքահարկի և հողի հարկի հաշվարկման, վճարման և այլ հարցերը կարգավորող օրենսդրական փոփոխությունների արդյունքում համակարգչային ծրագրի թարմացումները պարտադիր կարգով իրականացնելու է ՀՀ ՊԵԿ-ի հարկային վարչարարության կատարելագործման վարչության կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքներին ու մեթոդական ցուցումներին համապատասխան:

Գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված գործող համակարգերում տեղեկատվական և վիճակագրական ելքային լրացուցիչ ձևատեսքերի ներդրման անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն Կատարողին ներկայացնում է մանրամասն նկարագրությամբ գրավոր առաջարկություն, որը Կատարողի կողմից ենթակա է կատարման ՀՀ ՊԵԿ-ի հետ համաձայնեցնելուց հետո:

3.2. Սույն պայմանագրի 2.1-րդ կետով առաջարկվող որոշակի աշխատանքների համար նախատեսվում են հետևյալ սահմանափակումները՝

- գործող համակարգում նոր սերվերի տեղադրում՝ յուրաքանչյուր եռամսյակում ոչ ավելի, քան մեկ անգամ,
- գործող համակարգում նոր աշխատանքային համակարգչի տեղադրում՝ ամսական ոչ ավելի, քան երեք աշխատանքային տեղ,
- պատվիրատուի առաջարկությամբ գործող համակարգի տեղեկատվական և վիճակագրական ելքային լրացուցիչ ձևատեսքերի ներդրում՝ եռամսյակում ոչ ավելի, քան մեկ ձևատեսք,
- գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերն օգտագործող նոր աշխատողների համար գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի տեխնիկական պահանջներին ծանոթացում, համակարգերն օգտագործողի ձեռնարկի տրամադրում՝ ամսական ոչ ավել, քան երկու անգամ,

3.3. Սույն պայմանագրի 4.6-րդ կետում նշված՝ Պատվիրատուի պարտավորության կատարումից կախված սույն պայմանագրով առաջարկվող աշխատանքների կատարման հետագա ընթացքն ապահովելու նկատառումներով Կատարողը կիրառում է սույն պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նախազգուշական հատուկ պայմանները՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածում բերված նկարագրությամբ նախազգուշացնող տեխնիկական արգելափակման միջոցները, որի վերաբերյալ Պատվիրատուն իր համաձայնությունն արտացոլում է N2 հավելվածում:

3.4. Կատարողի կողմից սույն պայմանագրով առաջարկվող աշխատանքները, որոնց կատարման համար անհրաժեշտ են նյութեր, համակարգիչներ, համակարգչային սարքավորանքներ կամ պատրաստի այլ ծրագրային փաթեթներ, կատարվում են Պատվիրատուի կողմից տրամադրված՝ սույն կետում թվարկված միջոցներով:

3.5. Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի տրամադրած տեխնիկական միջոցների, նյութերի, համակարգիչների, համակարգչային սարքավորանքի ու ծրագրային փաթեթների նկատմամբ երրորդ անձանց ունեցած իրավունքների համար:

3.6. Աշխատանքները Կատարողի կողմից կատարվում են Կատարողի տարածքում, բացառությամբ այն աշխատանքների, որոնք հնարավոր չէ կատարել Կատարողի մոտ:

ԲԱԺԻՆ 4. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Կատարողի կողմից սույն պայմանագրով առաջարկվող աշխատանքների կատարման դիմաց ամսական վճարի ընդհանուր չափը որոշվում է որպես սույն պայմանագրի 4.2-րդ և 4.3-րդ կետերին համապատասխան գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար հաշվարկված ամսական վճարների հանրագումար:

4.2. Տեղեկատվական ավտոմատացված համակարգի սպասարկման վճարի չափը հաշվարկվում է ստորև բերված աղյուսակում և սույն պայմանագրի 4.3-րդ կետում նշված կարգով: Հաշվարկների համար աղյուսակում հիմք է հանդիսանում տվյալ համայնքում ֆիզիկական անձանց գույքահարկ կամ հողի հարկ վճարողների առավելագույն քանակը:

N:	Պատվիրատու	Տեղեկատվական ավտոմատացված համակարգի սպասարկման աշխատանքների ամսական վճարի չափը (դրամ)
1	մինչև 300 հարկ վճարող ունեցող համայնքներ	Սերվերի համար.....1000 Յուրաքանչյուր այլ համակարգչի համար... 500
2	300 - 600 հարկ վճարող ունեցող համայնքներ	Սերվերի համար.....2000 Յուրաքանչյուր այլ համակարգչի համար... 1000
3	600 - 1000 հարկ վճարող ունեցող համայնքներ	Սերվերի համար.....3000 Յուրաքանչյուր այլ համակարգչի համար... 1000
4	1000 և ավել հարկ վճարող ունեցող գյուղական համայնքներ և մինչև 1500 հարկ վճարող ունեցող քաղաքային համայնքներ	Սերվերի համար.....7000 Յուրաքանչյուր այլ համակարգչի համար... 1500
5	մինչև 3000 հարկ վճարող ունեցող քաղաքային համայնքներ	Սերվերի համար..... 10000 Յուրաքանչյուր այլ համակարգչի համար 1500
6	3000 և ավել հարկ վճարող ունեցող քաղաքային համայնքներ	Սերվերի համար..... 15000 Յուրաքանչյուր այլ համակարգչի համար ... 3000
7	Միջհամայնքային կառույցներ, բացառությամբ սույն աղյուսակի 1-ին,2-րդ և 3-րդ կետում նշվածների՝ ա) յուրաքանչյուր 1000 և ավել գույք ունեցող գյուղական և մինչև 1500 գույք ունեցող քաղաքային համայնքներ բ) յուրաքանչյուր 1500 և ավել գույք ունեցող քաղաքային համայնք գ) յուրաքանչյուր 3000 և ավել գույք ունեցող քաղաքային համայնք դ) այլ գյուղական համայնքներ՝ յուրաքանչյուր 1000 գույք ունեցողի համար	 Համաձայն սույն աղյուսակի 4-րդ կետի Համաձայն սույն աղյուսակի 5-րդ կետի Համաձայն սույն աղյուսակի 6-րդ կետի 1500

4.3. Սույն պայմանագրի 4.2-րդ աղյուսակի հիման վրա ըստ վճարողների առավելագույն թվաքանակի ֆիզիկական անձանց գույքահարկի կամ հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգից բացի գույքահարկի և հողի հարկի մյուս բոլոր համակարգերի սպասարկման գումարը հաշվարկվում է սույն պայմանագրի 4.2 -ում բերված աղյուսակին համապատասխան հաշվարկված սպասարկման ամսական վճարների գումարների նկատմամբ 20 տոկոսի չափով:

4.4. Սույն պայմանագրի 4.2-րդ և 4.3-րդ կետերում նշված ամսական վճարները չեն ներառում Երևան քաղաքից դուրս գործուղումների ծախսերը, որոնց հետ կապված հարցերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.5. Սույն պայմանագրի 4.2-րդ և 4.3-րդ կետերով սահմանված կարգով գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման վճարների գումարների և ամսական վճարի ընդհանուր հաշվարկը (այդ թվում՝ հաշվարկման հիմքում ընկած ելակետային տվյալները) արտացոլվում է սույն պահմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածում: Հաշվարկման հիմք հանդիսացող ելակետային տվյալների փոփոխությունների դեպքում սույն պայմանագրի կողմերը կազմում են նոր հավելված (հավելվածներ)՝ որպես սույն պայմանագրի անբաժանելի մաս (մասեր):

4.6. Սույն պայմանագրով առաջարկվող՝ գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար հաշվարկված ամսական ընդհանուր վճարների վճարումը յուրաքանչյուր ամսվա համար Պատվիրատուն պարտավոր է կատարել մինչև տվյալ ամսվա 20 -ը: Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ Պատվիրատուն կարող է կատարել նաև կանխավճարներ:

ԲԱԺԻՆ 5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. *Կատարողը պարտավորվում է՝*

ա) Կատարել աշխատանքները ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքներին ու մեթոդական ցուցումների համապատասխան,

բ) աշխատանքները կատարել պատշաճ որակով և փոխադարձ համաձայնեցված ժամկետներում,

գ) սույն պայմանագրով նախատեսված դեպքերում Պատվիրատուին ներկայացնել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների, նյութերի, համակարգիչների, համակարգչային սարքավորանքի ցանկ, դրանք ստանալու ժամանակ ստուգել որակական չափանիշները, իսկ աշխատանքների կատարման համար չափանիշների անհամապատասխանության մասին անմիջապես տեղեկացնել Պատվիրատուին,

դ) իր ուժերով և իր հաշվին վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տված այն թերությունները, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել տեխնիկական առաջադրանքում նախատեսված չափանիշների շեղումների,

ե) Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել աշխատանքների սպասվելիք արդյունքների ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին:

5.2. Կատարողն իրավունք ունի՝

ա) Պատվիրատուից պահանջել աշխատանքների կատարման համար տեխնիկական և կազմակերպչական պայմանների ապահովում,

բ) Պատվիրատուից պահանջել, որ տեխնիկական միջոցների շահագործումն իրականացվի տեխնիկական պայմաններին ու նորմաներին համապատասխան: Հակառակ դեպքում Կատարողը պատասխանատվություն չի կրում շահագործման կանոնները խախտելու արդյունքում առաջացած հետևանքների համար:

գ) Կատարողը պատասխանատվություն չի կրում նաև անձնակազմի անզգույշ կամ սխալ գործողությունների, տվյալների սխալ մուտքագրման կամ հեռացման արդյունքում առաջացած հետևանքների համար,

դ) իր հայեցողությամբ միակողմանի ընդհատել սույն պայմանագիրը նախօրոք մեկ ամսյա ժամկետում գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին՝ անվերապահորեն կատարելով մինչև պայմանագրի լուծումն ընկած ժամանակահատվածի աշխատանքները,

ե) սույն պայմանագրով առաջարկվող աշխատանքների կատարման հետագա ընթացքն ապահովելու նկատառումներով կիրառել սույն պայմանագրի 3.3-րդ կետում նշված նախազգուշական հատուկ պայմանները.

զ) Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.3-րդ կետում նշված նախազգուշական հատուկ պայմանների շարունակական խախտման դեպքում իր հայեցողությամբ միակողմանի ընդհատել սույն պայմանագիրը, գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին և անվերապահորեն կատարելով մինչև սույն պայմանագրի լուծումն ընկած ժամանակահատվածի աշխատանքները: Այս դեպքում մինչև պայմանագրի լուծումն ընկած ժամանակահատվածի բոլոր վճարումները Պատվիրատուի կողմից անվերապահորեն ենթակա են կատարման:

5.3. Պատվիրատուն պարտավորվում է՝

ա) սույն պայմանագրով նախատեսված դեպքերում Կատարողին ապահովել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, նյութերով, համակարգիչներով, համակարգչային սարքավորանքով՝ Կատարողի կողմից ներկայացված ցանկին համապատասխան, իսկ անհրաժեշտ որակական չափանիշների անհամապատասխանության դեպքում՝ դրանք փոխարինել,

բ) սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կատարել վճարումները, պահպանել սույն պայմանագրի 3.3-րդ կետում նշված նախազգուշական հատուկ պայմանները,

գ) իրականացնել միջոցառումներ ծրագրային վթարներից, անզգույշ գործողություններից և համակարգչային վարակներից (վիրուսներից) զերծ մնալու համար, մասնավորապես՝

- ապահովել անընդհատ սնուցման աղբյուր (UPS),
- ապահովել արտաքին կրիչների վրա արխիվացման միջոցներ (օրինակ, ZIP, CD-writer),
- անձնակազմից խստորեն պահանջել, որ համակարգիչների վրա չտեղադրվեն օտար ծրագրային միջոցներ (խաղեր, երաժշտություն և այլն),
- անձնակազմից խստորեն պահանջել, որ պարտադիր կարգով իրականացվի տվյալների արխիվացում,

դ) ապահովել սպասարկող անձնակազմի համապատասխան պատրաստվածության պատշաճ մակարդակ,

ե) համակարգչային տեխնիկայի միջոցների և սարքավորանքի շահագործումն իրականացնել տեխնիկական պայմաններին ու նորմերին համապատասխան:

5.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

ա) պահանջել Կատարողից, որ վերջինս իր ուժերով և իր հաշվին վերացնի աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տված այն թերությունները, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել տեխնիկական առաջադրանքում կամ հայտ-պատվերում նախատեսված չափանիշների շեղումների,

բ) Կատարողի հետ համատեղ քննարկել իր նկատառումները և առաջարկությունները աշխատանքների կատարման մասին,

գ) իր հայեցողությամբ միակողմանի ընդհատել սույն պայմանագիրը նախօրոք մեկամսյա ժամկետում գրավոր տեղեկացնելով Կատարողին՝ անվերապահորեն կատարելով մինչև պայմանագրի լուծումն ընկած ժամանակահատվածի բոլոր վճարումները,

դ) սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում սույն պայմանագրի 3.3-րդ կետում նշված նախազգուշական հատուկ պայմաններին համաձայն չլինելու դեպքում, իր հայեցողությամբ միակողմանի ընդհատել սույն պայմանագիրը, գրավոր տեղեկացնելով Կատարողին՝ անվերապահորեն կատարելով մինչև սույն պայմանագրի լուծումն ընկած ժամանակահատվածի բոլոր վճարումները:

ԲԱԺԻՆ 6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար օգտագործվող գույքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը մինչև դրանք Կատարողին հանձնելը և Կատարողից ընդունելուց հետո կրում է Պատվիրատուն:

Կատարողի կողմից աշխատանքների կատարման համար օգտագործվող գույքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը դրանք ընդունելուց հետո մինչև հանձնելը կրում է Կատարողը:

Կատարված աշխատանքների արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը՝ մինչև Պատվիրատուի կողմից այն ընդունելը, կրում է Կատարողը:

6.2. Աշխատանքների կատարման անհնարինության դեպքում, որը ծագել է Պատվիրատուի մեղքով, վճարումները կատարվում են լրիվ ծավալով: Այն դեպքում, երբ կատարման անհնարինությունը ծագել է այնպիսի հանգամանքներից, որոնց համար կողմերից որևէ մեկը պատասխանատվություն չի կրում, Պատվիրատուն Կատարողին հատուցում է նրա կատարած փաստացի ծախսերը:

6.3. Սույն պայմանագիրը համարվում է լուծված հետևյալ դեպքերում և ժամկետներում՝

- սույն պայմանագրի 5.2-րդ կետի «դ» ենթակետով և 5.4-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքերում՝ գրավոր տեղեկացմանը հաջորդող մեկամսյա ժամկետը լրանալու օրվանից,
- սույն պահմանագրի 5.2-րդ կետի «գ» ենթակետում և 5.4-րդ կետի «դ» ենթակետում նախատեսված դեպքերում՝ սույն պայմանագրի N2 հավելվածին համապատասխան՝ գրավոր տեղեկացմանը անմիջապես նախորդող եզրային ամսաթվից:

6.4. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, ենթակա են կարգավորվման ՀՀ գործող օրենսդրությամբ:

6.5. Սույն պայմանագրին կցվում են N1 և N2 հավելվածները, որոնք հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը: Սույն պայմանագրի 4.5-րդ կետում նշված դեպքում սույն պայմանագրի կողմերը կազմում են նոր հավելված (հավելվածներ)՝ որպես սույն պայմանագրի անբաժանելի մաս (մասեր):

6.6. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը:

6.7. Սույն պայմանագրի կնքման պահից Պատվիրատուի և Կատարողի միջև նախկինում կնքված սպասարման պայմանագիրը համարվում է լուծված:

ԲԱԺԻՆ 7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կատարող՝	Պատվիրատու՝
«ԱԿԱՏՈՐ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ,	Պատվիրատուի ...
ՀՀ, ք.Երևան, Թումանյան 1, բն.33	Բ. Պատվիրատուի ... Ա. Պատվիրատուի հր. 7
հաշիվ՝ 193004670439 «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ » -ում	Պատվիրատուի ...
Տնօրեն՝ Լ.Ատվանդատուրյան	Գ. Գրիգորյան
.....	

Հավելված N1

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
N 35/5

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «01» հոկտեմբեր 2012թ.

Գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար ամսական վճարների հաշվարկ

Սույն հավելվածով կողմերն արձանագրում են՝

Հաշտարարների 4.2-րդ կետի ամսական վճարի չափը (դրամ)	Հաշտարարների 4.2-րդ կետի ամսական վճարի գումարը՝ վճարելիության վերջին տարվա հունվարի 1-ի դրությամբ (դրամ)	Հաշտարարների 4.2-րդ կետի ամսական վճարի գումարը՝ վերջին հաշվետու ամսվա դրությամբ (դրամ)	Հաշտարարների 4.2-րդ կետի ամսական վճարի գումարը՝ սեփականության իրավունքի գրանցման պետական գրանցման ենթակա գույքի դեպքում՝ գրանցումից հետո առաջիկա վեց ամիսների ընթացքում (դրամ)	Հաշտարարների 4.2-րդ կետի ամսական վճարի գումարը՝ վերջին հաշվետու ամսվա դրությամբ (դրամ)	Հաշտարարների 4.3-րդ կետի ամսական վճարի գումարը՝ վերջին հաշվետու ամսվա դրությամբ (դրամ)	Հաշտարարների 4.1-ին կետի համաձայն գույքահարկի գանձման գծով գանձարանային ծառայությունների մատուցման դիմաց գանձարանային ծառայությունների գծով (դրամ)	Ծանոթագրություն
6	15000	–	–	15000	3000	18000	

Գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար ամսական վճարների ընդհանուր գումարը տառերով .....
քսանհինգ հազար ..... *դրամ:*

Կատարող՝

«ԵԿԵՏՈՐ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ,
ք.Երևան, Թումանյան 1, բն.33
հհ 193004670439 «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»-ում
Տնօրեն Լ. Ասատվածատուրյան
.....

Պատվիրատու՝

Աշտարակի քաղաքապետարան
ք. Աշտարակ, Հ. Աշտարակեցու փող. 7.
Աշտարակի քաղաքապետ՝
Գ. Գրիգորյան

Հավելված N2

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
N...3575....

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. .....Երևան..... «..01...» հոկտեմբ.. 2012թ.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն հավելվածով կողմերն արձանագրում են՝

Պայմանագրի 4.6-րդ կետին համապատասխան՝ պայմանագրով առաջարկվող գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար հաշվարկված ամսական ընդհանուր վճարների վճարումը յուրաքանչյուր ամսվա համար Պատվիրատուն պարտավոր է կատարել մինչև տվյալ ամսվա 20 -ը: Անկախ փաստացի վճարման հանգամանքից՝ Պայմանագրով նախատեսված ամսական վճարների հաշվեգրված գումարներից Կատարողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով կատարել ՀՀ պետական բյուջեի հանդեպ իր հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները:

Պատվիրատուի կողմից պայմանագրային պարտավորությունների (պայմանագրի 4.6-րդ կետ) կատարումից կախված պայմանագրով առաջարկվող աշխատանքների կատարման հետագա ընթացքն ապահովելու նկատառումներով Կատարողը կիրառում է հետևյալ նկարագրությամբ նախազգուշական հատուկ պայմանները՝

1. Կողմերը համաձայնվում են, որ պայմանագրի գործողության յուրաքանչյուր տարվա համար սահմանվում են երեք եզրային ամսաթվեր՝ ապրիլի 1-ը, օգոստոսի 1-ը և դեկտեմբերի 1-ը:

2. Մինչև եզրային ամսաթվերն ընկած 15-օրյա ժամանակահատվածի սկզբից մինչև եզրային ամսաթիվը տեղեկատվական համակարգը հատուկ հաղորդագրությունով օրական կհիշեցնի համակարգերի սպասարկման վճարումները կատարելու անհրաժեշտության մասին:

3. Վճարումները կատարած լինելու կամ պակաս կատարված վճարումների լրավճարման մասին Կատարողին տեղեկացնելու դեպքում Պատվիրատուն Կատարողից կստանա հատուկ պայմանաթառը, որը մուտքագրելուց հետո տեղեկատվական ավտոմատացված համակարգերը կշարունակեն իրենց աշխատանքը:

4. Վճարումներն ամբողջությամբ չկատարելու դեպքում եզրային ամսաթվից համակարգի աշխատանքը կարգելափակվի մինչև պայմանագրային պարտավորությունների լրիվ կատարումը, այդ մասին Կատարողին տեղեկացումը և Կատարողից հատուկ պայմանաթառի ստացումը: Հատուկ պայմանաթառի մուտքագրումից հետո տեղեկատվական ավտոմատացված համակարգերը կշարունակեն իրենց աշխատանքը:

5. Կատարողն իրավունք ունի Պատվիրատուի կողմից սույն նախազգուշական հատուկ պայմանների շարունակական խախտման դեպքում իր հայեցողությամբ միակողմանի ընդհատել պայմանագիրը, գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին և անվերապահորեն կատարելով մինչև պայմանագրի լուծումն ընկած ժամանակահատվածի աշխատանքները: Այս դեպքում մինչև պայմանագրի լուծումն ընկած ժամանակահատվածի բոլոր վճարումները Պատվիրատուի կողմից անվերապահորեն ենթակա են կատարման:

6. Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում սույն նախազգուշական հատուկ պայմաններին այլևս համաձայն չլինելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ միակողմանի ընդհատել պայմանագիրը, գրավոր տեղեկացնելով Կատարողին՝ անվերապահորեն կատարելով մինչև սույն պայմանագրի լուծումն ընկած ժամանակահատվածի բոլոր վճարումները:

Պայմանագրի 6.3-րդ կետին համապատասխան՝ սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերում նշված հիմքերով պայմանագրի գործողությունը համարվում է դադարած գրավոր տեղեկացմանն անմիջապես նախորդող եզրային ամսաթվից:

Պատվիրատուն ծանոթացել է պայմանագրի նախազգուշական հատուկ պայմաններին, համաձայն է, որի համար վավերացնում է սույն հավելվածը:

Կատարող՝
«ՎԵԿՏՈՐ-ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ,
ք.Երևան, Թամանյան 1/33
հ/հ 1930046704390 «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» -ում
Տնօրեն՝ Լ.Աստվածատուրյան
_____

Պատվիրատու՝
Ուղարկվել է քաղաքապետարան
ք. Ուղարկվել է Ուղարկվելու իր,
Ուղարկվեցավ քարտուղար՝
Գ. Հայրապետյան

Հավելված N1

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
N..3575.....

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. .....Երևան..... «..01...» հոկտեմբեր... 2014 թ.

Գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար ամսական վճարների հաշվարկ

Սույն հավելվածով կողմերն արձանագրում են՝

ամսական վճարումների գումարը (դրամ)	ամսական վճարումներ կատարելու դեպքում (դրամ)	Հաշվարկային տարվա ընթացքում գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար ամսական վճարումներ կատարելու դեպքում (դրամ)	միանվագ վճարումներ կատարելու դեպքում (դրամ)	Հաշվարկային տարվա ընթացքում գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար ամսական վճարումներ կատարելու դեպքում (դրամ)	Հաշվարկային տարվա ընթացքում գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար ամսական վճարումներ կատարելու դեպքում (դրամ)	Ընդհանուր վճարումներ
6	15000	3000	1	18000	3600	21600

Գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար ամսական վճարների ընդհանուր գումարը տառերով ..քսանմեկ հազար..... ..... հարյուր ..... դրամ:

Կատարող՝

«ՎԵԿՏՈՐ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ,
ք.Երևան, Խանանյան 1, բն.33
հ/հ 1930046704 39 «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» -ում

Տնօրեն Լ.Ասատրյան

Պատվիրատու՝

Ի. Ավագյան

Հավելված N1

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
N 35/5

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «01» 04 2015 թ.

Գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար ամսական վճարների հաշվարկ

Սույն հավելվածով կողմերն արձանագրում են՝

Ամսական պայմանագրի 4.2-րդ կետի համաձայն վճարման ենթակա գումարը (դրամ)	Ամսական պայմանագրի 4.2-րդ կետի համաձայն ավտոմատացված տեղեկատվական համակարգերի սպասարկման գումարը (դրամ)	Ամսական պայմանագրի 4.2-րդ կետի համաձայն ՀՀ տարածքում գտնվող բաժանմունքներում տեղադրված տեղեկատվական համակարգերի քանակը (հատ)	Ամսական պայմանագրի 4.2-րդ կետի համաձայն ՀՀ տարածքում գտնվող բաժանմունքներում տեղադրված տեղեկատվական համակարգերի քանակը (հատ)	Ամսական պայմանագրի 4.2-րդ կետի համաձայն տարածքային գրասենյակներում տեղադրված տեղեկատվական համակարգերի քանակը (հատ)	Ամսական պայմանագրի 4.3-րդ կետի համաձայն տարածքային գրասենյակներում տեղադրված տեղեկատվական համակարգերի գումարը (դրամ)	Ամսական պայմանագրի 4.1-ին կետի համաձայն Ոստիկանության գլխավոր վարչության տեղեկատվական համակարգերի գումարը (դրամ)	Ամսական վճարում
6	15000	3000	3	24000	4800	28800	

Գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի սպասարկման համար ամսական վճարների ընդհանուր գումարը տառերով ...քսան հազար հարյուր... ...քսան հազար հարյուր... դրամ:

Կատարող՝

«ՎԵԿՏՈՐ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ,
ք.Երևան,Գրիգորյան 1, բն.33
հ/հ 193004670439 «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» -ում
Տնօրեն՝ Ն.Ասատրյան

Պատվիրատու՝

Հրաստան Գրիգորյան
Հ. Մելքումյան